

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Վարչապետ.**

Հանրապետությունը ճգնաժամից դուրս բերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացրած ծրագրում փաստացի նշված են պետական կենտրոնացված կառավարման այն հիմնական օղակները, որոնց բարեփոխումը պետք է նպաստի երկրում սոցիալ-տնտեսական միջավայրի առողջացմանը, ինչպես նաև նշված են տնտեսավարման որոշ ոլորտային ուղղություններ, որոնք կնպաստեն օպերատիվորեն արդյունքների հասնելուն:

Եթե պետական իշխանության օղակների բարեփոխման գծով այլընտրանք գրեթե գոյություն չունի (խնդրի ձևակերպման առումով), ապա նշված ոլորտային ուղղությունների ընտրության հարցը կարող է քննարկվել:

Եթե գյուղմթերքների արտադրության համար կպահանջվեն համեմատաբար ոչ մեծ կապիտալ ներդրումներ և շրջանառու միջոցներ՝ ուղղված հենց արտադրության խրախուսմանը, ապա այդ արտադրանքի իրացումը Հանրապետության սահմաններից դուրս բարդ խնդիր է, ինչպես տեխնիկապես, այնպես էլ արտաքին քաղաքականության առումով:

Արդյոք կարո՞ղ ենք մրցունակ լինել գյուղատնտեսական ապրանքների այնպիսի խոշոր արտադրողների շրջապատում, ինչպիսիք են Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը, իսկ ներքին շուկան, ինչպես ցույց է տվել վերջին տարիների փորձը, չի կարող ապահովել սպառման անհրաժեշտ ծավալը:

Հաշվի առնելով վերոնշյալը, մենք գործնականում կստանանք գյուղմթերքների փոքր և միջին արտադրողների աշխատանքի ցածր վարձատրություն, և որպես հետևանք՝ արտագաղթի աճ:

Զարգացում պահանջող մյուս վիճելի ոլորտը զբոսաշրջությունն է: Սակայն մեր մոտեցումը այս ուղղության զարգացմանը, որպես կանոն, մակերեսային է և սիրողական:

Ճանապարհների, տրանսպորտի, մատչելի հյուրանոցների (քեմփինգներ), պրոֆեսիոնալ էքսկուրսավարների և զբոսաշրջության ենթակառուցվածքների մյուս ատրիբուտների բացակայության պայմաններում, այս ոլորտում որակական փոփոխությունների հասնելը մեծ

խնդիր է, մանավանդ զբոսաշրջության նկատմամբ ընդհանուր մշակույթի բացակայության պայմաններում:

Հայաստանի հյուրանոցներում, սանատորիաներում, քեմփինգներում և հանգստի տներում սպասարկման որակը խիստ բարելավման կարիք ունի (ցավոք, մեր երկրում, ընդունված չէ լիցենզավորել բնակչության սպասարկման հետ կապ ունեցող աշխատողների գործունեությունը):

Կարծում եմ, որ տնտեսության զարգացման այս ճյուղերի ընտրությունը, ամենայն հավանականությամբ, մանրակրկիտ կերպով քննարկվել է կառավարությունում և Ձեր ընտրությունը ճիշտ է (հիմնավորված):

Մակայն առավել կարևոր խնդիր է հենց ՀՀ կառավարության և պետական կառավարման տարբեր օղակների գործունեության բարեփոխումը:

Հարգելի պարոն Վարչապետ, Դուք արդեն կատարել եք որոշակի կառուցվածքային փոփոխություններ պետական կառավարման համակարգում և իրականացրել ղեկավար կադրերի ընտրությունն ու տեղաբաշխումը: Այդ աշխատանքներն անհրաժեշտ էին, և կարծում եմ պահանջված հասարակության կողմից, սակայն դա միայն գործի կեսն է:

Ձեր գործունեությամբ այս ուղղությամբ ուրվագծել եք կառավարման համակարգի ձևը, իսկ էությունը (բովանդակությունը) մնացել է «կադրից դուրս»:

Կառավարման համակարգի էություն ասելով պետք է հասկանալ որոշումների ընդունման ժամանակ կիրառվող այն մեթոդոլոգիան և տեխնոլոգիան, որոնք որոշում են ամբողջ կառավարման համակարգի և նրա առանձին օղակների գործունեության արդյունավետությունը, այսինքն նախարարների կաբինետը և համապատասխան նախարարություններն ու գերատեսչությունները:

Եթե ցանկանում ենք վերջնական արդյունքում ստանալ պետական կառավարման որակապես նոր համակարգ և հասնել նրա արդյունավետության նոր մակարդակի, ապա անհրաժեշտ է նորից վերագնահատել նրա բաղկացուցիչ օղակների նպատակները, խնդիրները, իրավունքներն ու պարտականությունները: Անհրաժեշտ է ուրվագծել չափանիշների շրջանակ, որոնք կարգավորում են ամբողջ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգը:

Այս նոր նախարարական և գերատեսչական դրույթները չպետք է լինեն «պատճենված» մեր հեռավոր և մոտ հարևաններից:

Չգիտես ինչու սոցիալ-տնտեսական կառուցվածքի փոփոխության հետ մենք բոլորովին մոռացել ենք երկրի կառավարման համակարգի և նրա առանձին օղակների՝ հասարակության անդամների առջև պատասխանատու լինելու մասին: Մեր պետական այրերը որոշել են, որ կապիտալիզմը ինքնակարգավորվում է ոչ միայն շուկայական հարաբերություններում, այլև հասարակական և կենցաղային մակարդակներում: Բացի այդ, մեր բարձրաստիճան չինովնիկները, եկել են այն խոր համոզման, որ Կառավարումը սահմանող հասկացությունների շղթայում՝ կանխատեսում, պլանավորում, որոշումների կայացում և ճշգրտում, դուրս են մնում այնպիսի օղակներ, ինչպիսիք են ընդունված որոշումների պլանավորումը և ճշգրտումը:

Պետական կառավարման ոչ մի մակարդակում հայրենական չինովնիկը չգիտի, թե ինչ է լինելու 3, 5, 10 կամ ավելի տարիներ հետո (սովորաբար ցանկացած կանխատեսում ամբոխահաճության և նախընտրական քարոզարշավի մակարդակում է): Մենք անվերջ բարեփոխում ենք դատական համակարգը, կրթական համակարգը, բնակչության կենսաթոշակային ապահովությունը, գիտությունը՝ ի դեմս ՀՀ գիտությունների ակադեմիայի և այլն:

Ոչ մի կերպ չենք կարողանում կողմնորոշվել, թե ով է պատասխանատու տվյալ նախարարության կամ գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության համար՝ պետական իշխանության համապատասխան օղակի ղեկավարը, թե՞ հենց օղակը: Ղեկավարի փոփոխման հետ փոխվում է նաև քաղաքականությունը: Իսկ ի՞նչ է Կառավարությունը այստեղ կա՞պ չունի:

Միևնույն հարցով, որի լուծման համար պատասխանատվություն են կրում մի քանի գերատեսչություններ, որպես կանոն, տրվում են տարբեր, միմյանց բացառող բացատրություններ:

Մեր անկախության 25 տարիների ընթացքում, շնորհիվ «գերատեսչական եզոիզմի», կառավարման պետական կառույցները վերածվել են իրենց ղեկավարների և նրանց ընտանիքների կալվածքների:

### *Ծանոթագրություն.*

*Խորհրդային տարիներին, ԽՍՀՄ հանրապետությունների համար ամենաարդյունավետ և արգասաբեր էր այն ժամանակաշրջանը, երբ գործում էին Ժողովրդական տնտեսության խորհուրդները: Այդ շրջանում ցանկացած խնդիր (նպատակ) ձևավորվում էր հանրապետության կողմից և դրա լուծման համար ներգրավվում էին հանրապետական բոլոր նախարարությունները և գերատեսչությունները, որոնք իրենց «մասնաբաժինը» ունեին տվյալ խնդրի լուծման գործում:*

*Բացի այդ, գոյություն ունենալու նախարարությունների և գերատեսչությունների պարտադիր շրջանակ, առանց որոնց հաստատման (համաձայնեցման) տվյալ խնդիրը չէր քննվում: Նշյալ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարները անձնական պատասխանատվություն էին կրում՝ տվյալ խնդրի լուծման հարցում հանրապետության հնարավորությունների ոչ պատշաճ գնահատման (բնապահպանական, քաղաքաշինական, ֆինանսական, կադրային և այլն) համար:*

*Երկրի տնտեսության նպատակային պետական կառավարման համակարգը, որոշակի առումով, հարթում էր համապատասխան ղեկավարների «ճյուղային էգոիզմը»:*

*Ավարտելով նամակս, հայցում եմ Ձեր ներողամտությունը անհանգստացնելու համար և հուսով եմ, որ պետական կառավարման ամբողջ համակարգի և նրա առանձին օղակների բարեփոխման Ձեր կուրսը չի ավարտվի միայն կառավարման կառուցվածքի և կադրային փոփոխություններով, այլ կբարեփոխվի նաև բուն էությունը:*

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան

*Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության  
հայկական կենտրոնի գործադիր տնօրեն*